

խանութիւն, որը մեղսական բժեր է գտնուած նոյն իսկ պապերի անսխալականութեան մէջ: Եւ այս պատահել է հէնց Լևոն ԺԳ.-ի հետ: Լևոն ԺԳ.-ի կողմից նշանակուած յանձնաժողովը, որ քննուած էր արգելուած գրքերը, ի վարմանս ամէնքի տեսաւ, որ այդ արգելուած գրքերի մէկի հեղինակը Լևոն ԺԳ. է: 1874 թուին, երբ պապը Յովակիմ Պեչչի էր կոչուած և Պերուջիայի արքեպիսկոպոս էր՝ «Ս. Կոյսի սրբազան արեան մասին» վերնագրով մի գիրք հրատարակեց: Յանձնաժողովը այդ գրքում մի հերետիկոսութիւն գտաւ և 1875 թ. այդ գիրքը արգելուած գրքերի շարքը մտաւ: 1878 թ. Յովակիմ Պեչչին պապ ընտրուեցաւ, իսկ նորա գիրքը արգելուած էլ մ'նաց. բաւականացան միայն հեղինակի անունը ջնջելով:

—Իտալիայում եկեղեցու և թաղաւորութեան մէջ եղած կռիւր վերջին ժամանակներս աւելի սուր կերպարանք ստացաւ շնորհիւ այն հանդամանքի, որ Վատիկանը ամուսնալուծութեան հարցի մէջ հէնց սկզբից վճռական և բարձր ոճով սկսեց խօսել: Վաթուրիկ հոգևորականութիւնը պապի անունով մի զօրեղ արշաւանք է սկսել կառավարութեան ամուսնական հարցի վերաբերմամբ հրատարակած նոր կանոնադրութեան դէմ, և այդ արշաւանքը մեծ յաջողութիւն է ունենում հարաւային Իտալիայում, ուր կառավարութեան այս նորմուծութիւնը համակրողներ չի գտնուած: Ինչպէս ասում է թղթակիցը, այս կանոնադրութիւնը հաւանականորէն նախարարութեան բաւական գլխացաւանք կպատճառէ:

### ԲՈՂՈՒՔԱԿԱՆ ԵԿԵՂԵՅԻ.

1847-ից ի վեր Փրանսիայում հաստատուած կայ մի մեծ ընկերութիւն, որի տիւղոսն է Société Centrale protestante d'Évangélisation (բողոքական կենտրոնական ընկերութիւն աւետարանի տարածման համար): Նրա գործունէութեան շրջանի մէջ են բուն Փրանսիայում 71 նահանգ, իսկ Ալժիրում Փրանսիական 4 գաղութ: Ներկայումս այդ ընկերութիւնն ունի 180-ից աւելի քահանայ և աշխարհական քարոզիչներ: Նրա տարեկան բիւզջէն գեռ. և ս 1901-ին բարձրանում էր 457956 ֆր.-ի:

Այս ընկերութիւնը վերջին 8 տարիները ընթացքում հիմնել է զանազան տեղերում 34 կայան. իսկ ներկայումս հետամուտ է հաստատուն գիրք գրաւելու Գորդոնիը, Լոս, Գէրս և Ժիրոնդ նահանգներում:

Գորգոնիք նահանգում բողոքականների պրոպականդան տարուէտարի անընդհատ յաջողութիւն է գտնուում: այնպէս որ 1901-ին մի բողոքական քահանայ կարող էր աւետել իւրայիններին. թէ ամբողջ երկիրը շարժման մէջ է: Նա թուում է, թէ ինչքան տեղերից հրաւիրում են իրան քարոզելու, և թէ ինչքան բազմաթիւ մօրզիկ զալիս են լսում իւր քարոզները և մասնակցում բողոքական համայնքի ժամերգութիւններին:

Soc. Cent.-ը հասել է իւր զօրութեան գագաթնակէտին: Քարոզչի մեծ կարիք կայ. հարիւրաւոր ստորագրութիւններով զանազան գիւղեր ու աւաններ գիտում են յիշեալ ընկերութեան՝ նոր կրօնի համար քարոզիչներ խնդրելու: Journal d'Evangelisation անուն կրող թերթն ասում է. «Պերիգորում չի մնացել գրեթէ ո՛չ մի գիւղ, որտեղ չկարողանայինք հիմնել մի փոքր համայնք»: Յիշեալ թերթի ատելով 1901-ի վերջերին բողոքական եկեղեցու գերին են դիմել 500-ի շափ նորօգարձներ: Լոտի նահանգում դեռ մինչև 1878 թուականը չկար ոչ մի բողոքական համայնք: Այդ թուականից սկսած այդ նահանգում կազմուած են երեք զօրեղ համայնքներ: Այժմ բողոքականներն ունին այդտեղ իրանց սեփական շարաթաթերթը (La Réforme, journal populaire d'Evangelisation), որը բացի Լոտի նահանգից տարածուած է նաև Գորգոնիք և Գէրս նահանգներում: Այս վերջին նահանգում կաթողիկէ կղերի անփութութեան պատճառով մի ժամանակ աւետարանն այնքան անձանօթ էր մնացել ժողովրդին, որ երբ 1886 թուին մի բողոքականի թաղման առթիւ աւետարանը կարգում, բացատրում են՝ հետաքրքրութիւն է զարթնում մօտից զխելու այդ մեծ գիրքը: Եւ դրանից յետոյ բողոքականութիւնը մեծ ծաւալ է ստանում ամբողջ նահանգում: Բողոքական են դառնում ո՛չ միայն աշխարհական մարդիկ, այլ և կաթողիկէ քահանաներ:

Աւետարանական շարժումը ոչ նուազ մեծ քայլեր է անում Վերին Լուառի նահանգում: Այտեղ 1898-ին Մօնթէյլ գիւղը գրեթէ առանց բացառութեան ընդունեց բողոքականութիւն, իսկ 1902-ի նոյեմբերին ունեցաւ իր յատուկ եկեղեցին: Այս և Տապօն գիւղը, որ 1901-ի աշնանից ի վեր յարել է բողոքականութեան: Ամենից աւելի զօրեղ է Բրիտնդի շրջակայքում առաջ եկած շարժումը: Այնտեղի քարոզիչը գրում է. «Ամէն օր այցելում են ինձ աղնիւ գիւղացիներ, որոնք խնդրում են ինձնից դնալ քարոզել իրանց գիւղերում: Իսկ դրա համար իմ տրամադրութեան տակ են դնում իրանց տներն ու շտեմարանները: Ընդ 40 գիւղ բաց է իմ առաջ: Մի ամիս է որ խօսում, ճառում եմ Լո-

դին դիւղում: Մեր ժողովներին մասնակցում են խիստ շատ կանայք: Այստեղ ունինք մի յարմար վայր՝ որ կարող է ամփոփել իւր մէջ այն բոլոր մարդկանց, որոնք երկու ժամուայ ճանապարհ կտրելով գալիս են շրջակայ դիւղերից՝ մի աւետարանական քարոզ լսելու: Նորերս գիւղապետն եկաւ ինձ մօտ՝ ուղեկցութեամբ երկու գիւղացու, և ասաց. «Ձեզ մօտ եմ գալիս իմ իշխանութեան տակ դանուող բոլոր գիւղական համայնքների (մօտ 45) կողմից, որոնք յանձնարարել են ինձ խնդրել Ձեզնից, որ բարեհաճիք շնորհ բերել մեզ մօտ և աւետարանական դաստիարակութիւններ կարգաւ: Դրա համար պատրաստ ենք Ձեր արամադրութեան տակ դնելու մեր հանրային խորհրդարանը, եթէ ընդունում էք այս առաջարկութիւնը, որ ներկայացնում եմ 12000 հոգու կողմից՝ յայտնեցէ՛ք, խնդրեմ, օրն ու ժամը, որպէս զի պատուիրեմ սպասուորիս, որ դնայ բոլոր գիւղերում յայտարարէ առաջին ժողովի ժամանակը»: Եւ առաջին ժողովը տեղի ունենալուց յետոյ՝ նոյն քարոզիչը գրում է. «Անհնար է թուել այն բոլոր հրաւէրները, որոնք ամէն կողմից հասնում են ինձ: Առանց չափազանցելու կարող եմ ասել, որ այժմ ամբողջ գաւառը բաց է իմ առաջ: Ս. Ժիւստում ունիմ միջին հաշուով 4—500 ունկնդիր՝ իւրաքանչիւր նոր ժողով աւելի բազմամարդ է լինում քան նախորդը: Ես կարծում եմ, որ ժողովուրդը շուտով երկու խմբի կը բաժանուի: Արդէն կազմուած է մի մեծ և կանոնաւոր համայնք: Ժողովները փակուում են մեծ ոգևորութեամբ և Vivent les protestants! Sortons de Rome! (Սեցցե՛ն բողոքականները, ելնե՛ք Հռոմից) աղաղակներով: Աէդրինում ընակիչների համարեա կէսը բաժանուել է հռովմէական եկեղեցուց:

Ժիրոնդում Oeuvre de Saint—Aubin—de Blaye ընկերութիւնը տասնամեայ գործունէութիւնից յետոյ 1900 թուին կարողացաւ միանալ Soc. Centr.-ի հետ 6 համայնքով, 7 քահանայով, 3 դպրոցով, 1 ուսուցչով, 2 ուսուցչուհով, երեք ծխամաներով (Pfarrhaus) և 22000 Ֆր.-ի տարեկան ընդջէով: Այդ ժամանակից սկսած աւետարանական եկամուտ համայնքներին սկիզբ է գրուել նախ ԲէլՖոնտում, որտեղ նորագարձները մի նոր եկեղեցի կառուցանել տալու համար նուիրեցին հող, քար և իրանց սեփական միջոցներից 1000 Ֆր., ապա Սովֆէր Դը Գիյէնում և Պօն դ' Արմանում, որտեղ 1901-ին համայնքի հաստատութեան օրը նոր եկեղեցու դիրքը մտան 35 հոգի:

Բացի վերոյիշեալ ընկերութիւններից, որոնց գործունէութեան արդիւնքները թուեցինք համառօտակի, Քրանսիայում գոյութիւն ունին դեռ ուրիշներն ևս: Դրանցից գլխաւորներն են

Société Evangélique de France & Oeuvre de Propagande évangélique de Pons, որոնց գործունեութեան շրջանում գտնուում են տասնեակ նահանգներ: Դրանք ունին իրանց համար յատուկ օրաթերթեր և քանի գնում գորանում են Ֆրանսիայի նման մի կաթոլիկ աշխարհում:

### ՀԱՒԷՇՆՆԵՐԻ ԵԿԵՂԵՑԻ.

Ինչպէս յայտնի է Հաբէշների եկեղեցին գտնուում է Կոպտական պատրիարքի հոգևոր իրաւասութեան ներքոյ, և նորա եպիսկոպոսը ձեռնադրուում է այս եկեղեցւոյ պետից: Վերջերս Կահիրէ է գնացել պատրիարքի մօտ Հաբէշների Մատթէոս եպոս., որպէս զի հաստատուի Եթովպիոյ արքեպիսկոպոս կամ պատրիարք: Սակայն Կոպտական պատրիարքի կարծիքով այդ աստիճանը վայել է միայն Պետրոս եպ. Աբունին, որը եղել է Հաբէշտանի եպիսկոպոս դեռ ևս Յովհաննէս կայսեր օրով և այժմ էլ կենդանի է: Բայց Աբունան Անգլիացւոց կողմի մարդ լինելով՝ լաւ յարաբերութեան մէջ չէ նեգուս Մենելիքի հետ: Այս տարածայնութիւնը Մենելիքի և Կոպտական պատրիարքի մէջ կարող է հերձուած յառաջ բերել, և այդ կողմից, ինչպէս երևում է, մի քանի քայլ արդէն արուած է: Մատթէոս եպո. գնացել է Երուսաղէմ և այնտեղ ձեռք է բերել Հաբէշների համար մի տաճար ս. Կոստանդինի և ս. Հեղինէի անունով: Մինչև այժմ Հաբէշները Երուսաղէմում ոչ մի տաճար չունէին. այժմ ոչ միայն տաճար ունին, այլ և աշխատում են աւելի հիմնաւոր կերպով հաստատուել այնտեղ և հիմնարկել են Հաբէշների վանք ու հիւրատուն: Որովհետև Հաբէշների դնած տաճարը գտնուում է ս. Էջմիածնի Ամենայն Հայոց Կաթողիկոսի գերեշխանութեան ներքոյ, ուստի Հաբէշները յոյս ունին, թէ այդպէս նոքա օրինաւոր կերպով կազատուեն Կոպտական պատրիարքից կախում ունենալուց:

